ՄԻ ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Հայ դատին սատար կանգնելու գործում անժխտելի է ֆրանսիացի մտավորականների մեծ ներդրումը։ Սկսած Համիդյան ժամանակներից, նրանք բազմիցս բողոքի խոսք են ուղղել ընդդեմ հայկական կոտորածների, անարգանքի սյունին գամել հայերի ցեղասպանության կազմակերպիչներին։ 1897 թ. Փարիզում կարդացած հրապարակային դասախոսության ժամանակ նշանավոր պատմաբան, Ֆրանսիական ակադեմիայի անդամ Ալբեր Վանդալը պատմության մեջ առաջին անգամ Աբդուլ Համիդին անվանեց «կարմիր սուլթան»։ Հետագա տարիներին Ժ. Ժորեսը, Ա. Ֆրանսը, Վ. Բերարը և ուրիշներ հանդես են եկել ի նպաստ հայ ժողովրդի։

Ստորև հրապարակվող փաստաթուղթը կազմվել է 1922 թ. դեկտեմբերին՝ ֆրանսիացի մտավորականների մի մեծ խմբի կողմից և ուղղվել Լոզանի կոնֆերանսին, որը գումարվել էր Մերձավոր արևելքի հետ կապված վիճելի հարցերի քննարկման համար։ Սույն կոչով ֆրանսիացի 74 մտավորականներ, որոնց թվում Նոբելյան մրցանակի երկու դափնեկիր (Ա. Ֆրբանս, Շ. Ռիշե) և Ֆրանսիական ակադեմիայի վեց անդամ կոնֆերանսի մասնակից տերություններից պահանջում են արդարացի լուծում տալ հայկական խնդրին։

Փաստաթուղթը, որի պատճենը (մեքենագիր) պահվում է ՀՀ Պետական էլեկտրոնական պետական արխիվում (Ֆ. 430, ց. 1, գ. 1195), ներկայացնում ենք հայերեն թարգմանությամբ։

Վ. Ա. Պողոսյան

Կոլեժ դը Ֆրանսի պրոֆեսոր պ[արոն] Ա. Մեյեի նախաձեռնությամբ հետևյալ կոչը, ի նպաստ Հայաստանի, հենց նոր հղվեց Լոզանի՝ կոնֆերանսին

Այն ահավոր վիճակը, որում ներկայումս գտնվում է Թուրքիայի հայ բնակչությունը, ամոթաբեր է քաղաքակիրթ աշխարհի համար։

Բեռլինի վեհաժողովից ի վեր, ուր թուրքական կառավարությունը խոստացել էր բարենորոգումներ անցկացնել կայսրության հայկական նահանգների վարչակարգում, և ուր եվրոպական վեց տերություններ ներգրավվել էին այդ բարենորոգումների վերահսկման գործում, այս դժբախտ ժողովուրդն արժանացել է միմիայն կոտորածների։

Պատերազմի ընթացքում դաշնակիցները հանդիսավորությամբ հայտարարեցին, որ Թուրքահայաստանի ազատագրումն իրենց մղած պայքարի նպատակներից է։ Ազգերի լիգայի համաձայնագրի 22-րդ հոդվածը և այն որոշումները, որոնք հաղթանակից հետո ընդունվեցին դաշնակից կառավարությունների կողմից, ամրապնդեցին այդ խոստումը։ Ազգերի լիգան միաձայն ընդունած բազմաթիվ որոշումներով հաստատել է հայկական ցեղի ապագան ապահովելու անհրաժեշտությունը՝ Ազգային օջախի ստեղծման միջոցով, մի բան, որը Նրան խոստացել էին։ Այդ խոստումները դեռևս չեն իրագործվել, և հայ ժողովուրդը կրել է շատ ավելի մեծ տառապանքներ, քան այն, որ նա ապրել էր պատերազմից առաջ։ Այս ժողովրդի՝ դաշնակիցների գործին ցուցաբերած նվիրվածության հետևանքով, ավելի քան մեկ միլիոն երկու հարյուր հազար հայեր վերջին ութ տարում զոհվել են՝ դառնալով կոտորածների, տեղահանությունների, համաճարակների և սովի զոհ։ Կենդանի մնացածները հարկադրված են եղել լքել իրենց հայրենի հողը և գաղթել տարբեր երկրներ, ավելի քան 600.000 դժբախտներ այսօր մնացել են առանց տանիքի, վրաններով տակ են, ժամանակավոր փայտաշեն տնակներում, զուրկ՝ իրենց հենարանների օգնությունը ստանալուց, քանի որ աշ-

խատունակ տղամարդիկ ձերբակալվել են և արտաքսվել ներքին նահանգներ։

Մարդասիրությունը և արդարությունը, դաշնակիցների պատիվը և հենց իրենց՝ թուրքերի շահերը պահանջում են, որ վերջ տրվի Հայաստանի այս տանջանքներին և անհապաղ ստեղծվի Ազգային օջախ, որպեսզի գաղթականների այս խմբերը կարողանան այնտեղ համախմբվել և ապրել ապահով պայմաններում։

Ֆրանսիայի առաջատար մտավորականները միշտ պաշտպանել են այս աշխատասեր և խաղաղասեր հին ժողովրդի դատը, ժողովուրդ, որը գրականության և արվեստների բարեկամն է և որը դարեր շարունակ այնքան մեծ ծառայություններ է մատուցել քաղաքակրթությանը։ Լոգանի կոնֆերանսի հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի նրա գոյությունը և ազգային մշակույթի պահպանումն ապահովող անհրաժեշտ միջոցառումների մշակումը։ Մենք լիահույս ենք, որ Ֆրանսիայի և կոնֆերանսին մասնակցող բոլոր երկրների պատվիրակները բարոյական այդքան մեծ նշանակություն ունեցող այս հարցին կտան արդարացի լուծում, որը համանշանակ պահանջվում է ամենքի կողմից։

Փարիզ, 8 դեկտեմբերի 1922

Ստորագրել են.

Անատոլ Ֆրանս, Ֆրանսիական ակադեմիայի անդամ։ Դքսուհի դը Նոայ։ Մորիս Բարրե[1], Ֆրանսիական ակադեմիայի անդամ, Սենի դեպուտատ։ Գարրիել Ֆոր։ Ա. Մեյե, Կոլեժ դը Ֆրանսի պրոֆեսոր։ Շառլ Դիհել[2], ինստիտուտի[3] անդամ։ Գեներալ դը Լակրուա։ Գուստավ Շլումբերժե[4], ինստիտուտի անդամ։ Ֆերնան Գրեշ։ Անրի դը Ռենիե[5], Ֆրանսիական ակադեմիայի անդամ։ Ռենե Պինոն։ Պոլ Դուկա։ Ա. Բարտոլոմե։ Ֆ. Ժեմիե[6], Օդեոնի տնօրեն։ Սեգոն-Վերերա։ Վիսան դ'Ինդի։ Էդուարդ Բրանլի[7], ինստիտուտի անդամ։ Գարրիել Մուրեյ։ Մ[ոնսինյո]ր Շ. Լաժիե, Արևելքի գործի տնօրեն։ Մ[ոնսինյո]ր Ալֆրեդ Բոդրիլար[8], Ֆրանսիական ակադեմիայի անդամ։ Օգյուստ Գովեն, ինստիտուտի անդամ։ Էմիլ Բուրե, Էկլերի տնօրեն։ Լյուդովիկոս դը Կոնտենսոն։ Աբրա Ժ. Դելարյու։ Էռնեստ Լեմոնոն, Գրականագետների ընկերության կոմիտեի անդամ։ Ֆերդինանդ Բրյունո, բանասիրական ֆակուլտետի դեկան։ Անրի Բերտելեմի, իրավունքի ֆակուլտետի դեկան։ Մ. Մոլիար, Գիտությունների ֆակուլտետի դեկան։ Դ[ոկտո]ր Շառլ Ռիշե[9], ինստիտուտի անդամ։ Ռոբեր դը Ֆլեր[10], Ֆրանսիական ակադեմիայի անդամ։ Պիեռ Միլ։ Ալֆրեդ Կրուասե[11], ինստիտուտի անդամ։ Պոլ Բոյե, ժամանակակից արևելյան լեզուների դպրոցի վարչական տնօրեն։ Գուստավ Էրվե, Վիկտուարի գլխավոր խմբագիր։ Էդմոնդ Հարոկուր, Կլյունիի թանգարանի տնօրեն։ Էժեն Լոտիե, Ազատ մարդու գլխավոր խմբագիր։ Մորիս Կրուասե, Կոլեժ դը Ֆրանսի վարչական տնօրեն։ Հ. Կասիտան, իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր։ Ալբեր Բենար, Գեղարվեստի դպրոցի տնօրեն։ Անրի Ռաբո[12], Կոնսերվատորիայի տնօրեն։ Անրի Բիդու։ Ռենե Պյուո[13]։ Անդրե Շերադամ։ Գարրիել Մուրեյ[14]։ Ֆրեդերիկ Մակլեր։ Ա. Ֆերդինանդ Հերոլդ։ Է. Սենար[15], ինստիտուտի անդամ, Ասիական ընկերության նախագահ։ Բուիսոն, Բուշ դյու Ռոնի դեպուտատ։ Ա. Մարդեն, Մառնի դեպուտատ։ Քսավիե Վալլա, Արգելի դեպուտատ։ Շառլ Գիդ, իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր։ Պոլ Ֆուրնիե[16], ինստիտուտի անդամ, իրավունքի ֆակուլտետի պրոֆեսոր։ Էդուարդ Սուլիե, Փարիզի դեպուտատ։ Մորիս Բելե, Վերին Գարոնի դեպուտատ։ Մարիուս Մուտե, Ռոնի դեպուտատ։ Գաստոն Դեշան, Դյո-Սևրի դեպուտատ։ Շ. Գեռնիե, Իլ դը Վիլենի դեպուտատ։ Լեոն Դոդե[17], Գոնկուրի ակադեմիայի անդամ, Սենի դեպուտատ։ Լյուսիեն Գիտրի։ Ալֆրեդ Վալլետ, Մերկուր դը Ֆրանսի խմբագիր։ Պոլ Լաբրե, Ֆրանսիական դաշնակցության գլխավոր քարտուղար։ Անտուան Բուրդել։ Ժ. Լակուր-Գայե[18], ինստիտուտի անդամ։ Ռենե Դյումեսնիլ, «Ռապելի» գլխավոր խմբագիր։ Գ. Միլե, Բարձրագույն ուսումնասիրությունների դպրոցի պրոֆեսոր։ Դ[ոկտո]ր Ռու[19],

Պաստյորի ինստիտուտի տնօրեն։ Լ. Հավե[20], ինստիտուտի անդամ։ Կամիլ Ֆլամարիոն[21], ինստիտուտի անդամ։ Ռաշիլդ։ Ժ. Հ. Ռոսնի ավագ[22], Գոնկուրի ակադեմիայի անդամ։ Վիկտոր Բերար, Ժյուրայի սենատոր։ Լուի Մարտեն, Վարի սենատոր։ Ժան Գիլոտո, Մորբիանի սենատոր։ Դ[ոկտո]ր Նոել Կազալս, Կանտալի սենատոր։ Հ. դը Լավրինյե, Վանդեայի սենատոր։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Բարրե Մորիս (1862—1923)—գրող, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1906)։

2 Դիեհլ Շառլ (1859—1944)—բյուզանդագետ, Արձանագրությունների և բանահյուսության ակադեմիայի անդամ (1910)։

3 1795 թ. ստեղծված Ֆրանսիայի Ինստիտուտն ընդգրկում է մինչ այդ երկրում գործող հինգ ակադեմիաները՝ Ֆրանսիական ակադեմիան, որի 40 անդամները կրում են «անմահ» տիտղոսը, Արձանագրությունների և բանահյուսության ակադեմիան, Գիտությունների ակադեմիան, Գեղարվեստի ակադեմիան, Բարոյական և քաղաքական գիտությունների ակադեմիան։

4 Շլումբերժե Գուստավ (1844—1929)—բյուզանդագետ, Արձանագրությունների և բանահյուսության ակադեմիայի անդամ (1884)։

5 Ռենիե Անրի դը (1864—1936)—գրող, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1911)։

6 Ժեմիե Ֆիրմին (1869—1933)—գեղասան, Փարիզի Օդեոն թատրոնի տնօրեն (1922—1930)։

7 Բրանլի Էդուարդ (1844—1940)—ֆիզիկոս, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1911)։

8 Բոդրիլար Ալֆրեդ (1859—1942)—կարդինալ, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1918), աշխատությունները նվիրված են կրոնի պատմության հարցերին։

9 Ռիշե Շառլ (1850—1935)—ֆիզիոլոգ, Նորվեգյան մրցանակի դափնեկիր (1913), Բժշկական ակադեմիայի անդամ (1898), Գիտությունների ակադեմիայի անդամ (1914)։

10 Ֆլեր Ռոբեր դը (1872—1927)—դրամատուրգ, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1920)։

11 Կրուասե Ալֆրեդ (1845—1923)—դրականագետ, Արձանագրությունների և բանահյուսության ակադեմիայի անդամ (1886)։

12 Ռաբո Անրի (1873—1949)—կոմպոզիտոր, Կոնսերվատորիայի տնօրեն (1920—1941)։

13 Պյուո Ռենե—1922 թ. Իզմիրի կոտորածների վերաբերյալ հրատարակել է «Իզմիրի վախճանը» խորագիրը կրող գրքույկը (Փարիզ, 1922), որը գրված է ականատեսների վկայությունների հիման վրա։ 1923 թ. այն վերահրատարակվել է «Իզմիրի վերջին օրերը» վերնագրով։

14 Գ. Մուրեյի ազգանունը հիշատակվում է երկրորդ անդամ։

15 Սենար Էմիլ (1847—1928)—գրականագետ, արևելագետ, Արձանագրությունների և բանահյուսության ակադեմիայի անդամ (1882)։

16 Ֆուրնիե Պոլ (1853—1935)—պատմաբան, իրավունքի պատմության մասնագետ։

17 Դոզե Լեոն (1867—1942)—գրող, Գոնկուրի ակադեմիայի անդամ (1897)։

18 Լակուր-Գայե Ժորժ (1856—1935)—պատմաբան, Բարոյական և քաղաքական գիտությունների ակադեմիայի անդամ (1911), աշխատությունները նվիրված են Ֆրանսիայի նոր դարի պատմության հարցերին։

19 Ռու Էմիլ (1853—1933)—բժիշկ, Բժշկական ակադեմիայի անդամ (1895), Գիտությունների ակադեմիայի անդամ (1899), Պաստյորի ինստիտուտի տնօրեն (1922—1930)։

20 Հավե Լյուդովիկոս (1849—1925)—գրականագետ։

21 Ֆլամարիոն Կամիլ (1842—1925)—աստղագետ։

22 Ռոսնի Ժոզեֆ Հենրի ավագ (1856—1940)—գրող, Գոնկուրի ակադեմիայի անդամ (1896)։